ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունվարի 2017 թվականի N 1-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի հունվարի 19-ի N 03-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետը՝ ***որոշում եմ.***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2017 թվականի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդի ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

2017 թվականի հունվարի 9
գ.Գետամեջ

Հա
Գեղամեջ համայնքի ղեկավ
2017 թվականի հունվարի 9-ի
N 1-Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

Հ/Հ	Աշխատողի		2017 թվականի աշխատանքային տարվա համար աշխատողներին ամենամյա արձակուրդ տրամադրելու ժամանակացույցն՝ ըստ ամիսների											
	Ազգանունը, անունը, հայրանունը	Զբաղեցրած պաշտոնը	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
1	Մուրադյան Ավետիս Վարազդատի	համայնքի ղեկավար											■	
2	Պապոյան Մերուժան Ռաֆիկի	համայնքի ղեկավարի տեղակալ								■				
3	Սարգսյան Կարեն Անդրանիկի	աշխատակազմի քարտուղար						■						
4	Սարգսյան Ռուզաննա Մուրադի	առաջատար մասնագետ							■					
5	Մինասյան Սասուն Հրայրի	առաջատար մասնագետ					■							
6	Շահբազյան Մարինա Վաղարշակի	առաջին կարգի մասնագետ												
7	Մկրտչյան Տաթև Արամի	գործավար			■									
8	Սարգսյան Մայրանուշ Հաբեթի	հավաքարար									■			
9	Ոսկանյան Աշոտ Աշոտի	վարորդ										■		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունվարի 2017 թվականի N 2-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 130-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ ***որոշում եմ***.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի «Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման մասին» N 130-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Օրինականացնել Ռոբերտ, Գայանե, Թեհմինա, Կարեն Մկրտչյաններին և Նունուֆար Ստեփանյանին պատկանող Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 5-րդ փողոցի 3-րդ փակուղու 8-րդ հասցեի բնակելի կառուցապատման հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0014-0085)՝»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

2017 թվականի հունվարի 18
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունվարի 2017 թվականի N 3-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆՈՐՄԱՏԻՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 5-րդ մասերով և 63-րդ հոդվածի 1-ին մասով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 47-Ն, «2017 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքում տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափեր սահմանելու մասին» N 49-Ն, «2017 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 50-Ն և «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 53-Ն որոշումները պաշտոնական հրապարակել 2017 թվականի հունվարի 20-ին:
2. Պաշտոնական հրապարակումն իրականացնել համայնքի տարբեր հատվածներում ցուցատախտակներին փակցնելու և համայնքապետարանի պաշտոնական կայքում (www.getamej.am) տեղադրելու միջոցով:
3. Պաշտոնական հրապարակման պատասխանատվությունը դնել աշխատակազմի քարտուղարի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

2017 թվականի հունվարի 18
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունվարի 2017 թվականի N 4-Ա

ԿԱՐԵՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի երկրորդ ենթակետով, նույն հոդվածի 2-րդ և 3.1-ին մասերով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Կարեն Անդրանիկի Սարգսյանին (պաշտոնի անձնագրի ծածկագիր՝ 1.2-1) շնորհել իր զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր՝ Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի հունվարի 24
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունվարի 2017 թվականի N 5-Ա

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Սահմանել 2017 թվականի ապրիլի 2-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունների անցկացման տեղամասային կենտրոն, համայնք Գետամեջ 3-րդ փողոց N 11 հասցեում գտնվող «Գետամեջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում:
2. Սույն որոշման մասին տեղեկացնել լիազոր մարմնին, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնը տիրապետող կազմակերպության ղեկավարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի հունվարի 24
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունվարի 2017 թվականի N 6-Ա

ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. 2017 թվականի ապրիլի 2-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունների քարոզչական պաստառները փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) 3-րդ փողոցի թիվ 1 հասցեի հարակից տարածքի պատ, 16 քառակուսի մետր,

2) 1-ին փողոցի և 1-ին փողոցի 2-րդ փակուղու հատման հարակից տարածքի պատ, 16 քառակուսի մետր:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի հունվարի 24
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունվարի 2017 թվականի N 7-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի N 16 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման հավելվածի 11-րդ և 12-րդ կետերի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

1) Մերուժան Ռաֆիկի Պապոյան - Գետամեջ համայնքի ղեկավարի տեղակալ,

2) Կարեն Անդրանիկի Սարգսյան - Գետամեջի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար,

3) Ռուզաննա Մուրադի Սարգսյան - Գետամեջի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ,

4) Սանամ Մուրադի Սարգսյան - Գետամեջ համայնքի ավագանու անդամ,

5) Էթերինա Սերյոժայի Խուրշուդյան - «Գետամեջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցիչ:

2. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը:

3. Սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի 2010 թվականի հունիսի 21-ի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անդամների կազմը ավագանու հաստատմանը ներկայացնելու մասին» N 16 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի հունվարի 24
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2017 թվականի N 8-Ա

ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. 2017 թվականի հունվարի 31-ին ժամը 15:00-ին հրավիրել Գետամեջ համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգով.

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2010 թվականի հունիսի 22-ի N 19 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 19-ի N 51-Ա և N 52-Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի հունվարի 25
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2017 թվականի N 9-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջի համայնքապետարանի կարիքների համար 2017 թվականին կատարվող գնումների պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Ապահովել գնումների պլանի իրապարակայնությունը՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

2017 թվականի հունվարի 25
գ.Գետամեջ

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի
2017 թվականի հունվարի 25-ի N 9-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

Պատվիրատու՝ Գետամեջի համայնքապետարան
(ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման)՝ 207025
Ծրագիրը՝ Համայնքի 2017 թվականի բյուջեից իրականացվող
Անվանումը՝ Օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում
Բաժին 01 Խումբ 1 դաս 1 ծրագիր 51

Միջանցիկ կոդը՝ ըստ CPV դասակարգման	Անվանումը	Գնման ձևը (ընթացակարգը)	Չափման միավորը	Միավորի գինը	Ընդամենը ծախսերը /դրամ/	Քանակը
1	2	3	4	5	6	7
30190000	Զանազան գրասենյակային նյութեր	ԲԸԱՀ	դրամ		250000	1
09132200	Բենզին ռեգուլյար	ԲԸԱՀ	լիտր		950000	1
39000000	Վարչական սարքավորումներ	ԲԸԱՀ	դրամ		250000	1
34631140	անվադողեր	ԲԸԱՀ	դրամ		350000	4
65300000	Էներգետիկ ծառայություններ	ԲԸԱՀ	կվտ/ժ		290000	
64210000	Հեռախոսավարձ	ԲԸԱՀ	դրամ		370000	1
66511170	ապահովագրական ծառայություն	ԲԸԱՀ	դրամ		35000	
79211150	Աուդիտորական ծառայություն	ԲԸԱՀ	դրամ		300000	
18530000	Հատուկ նպատակային այլ նյութեր	ԲԸԱՀ	դրամ		100000	1
75110000	Ընդհանուր բնույթի այլ ծառայութ.	ԲԸԱՀ	դրամ		200000	
	Ընդամենը				3095000	
Անվանումը՝ Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ						
Բաժին 01 Խումբ 3 դաս 3 ծրագիր 51						
72700000	Համակարգչային ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ		116000	1
70000000	Մասնագիտական ծառայություն	ԲԸԱՀ	դրամ		200000	
99600000	Պարդադիր վճարներ	ԳՇԾ	դրամ		30000	
	Ընդամենը				346000	
Անվանումը՝ Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ						
Բաժին 01 Խումբ 6 դաս 1 ծրագիր 51						
99600000	Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպ.	ԳՇԾ	դրամ		7000	1
71221400	Գեոդեզիական քարտեզագրում	ՊԸ	դրամ		9000000	
90620000	ընդհանուր բնույթի այլ	ԲԸԱՀ	դրամ		200000	
	Ընդամենը				9207000	

Անվանումը՝ Քաղաքացիական պաշտպանություն						
Բաժին 02 խումբ 2 դաս 1 ծրագիր 51						
75222000	Ծառայություններ քաղաքացիական պաշտպանության ոլորտում	ԲԸԱՀ	դրամ		10000	1
	Ընդամենը				10000	
Անվանումը՝ Պաշտպանություն/ այլ դասերին չպատկանող						
Բաժին 02 խումբ 5 դաս 1 ծրագիր 51						
75220000	Ծառայություններ պաշտպանության ոլորտում	ԲԸԱՀ	դրամ		10000	1
	Ընդամենը				10000	
Անվանումը՝ Փրկարար ծառայություն						
Բաժին 03 խումբ 2 դաս 1 ծրագիր 51						
75251500	Փրկարարական ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ		10000	1
	Ընդամենը				10000	
Անվանումը՝ Ճանապարհային տրանսպորտ						
Բաժին 04 խումբ 5 դաս 1 ծրագիր 51						
	Աշխատանք					
45231187	Փողոցների վերանորոգում	ՊԸ	քմ		25607750	1
16700000	Վարչական սարքավորում	ԵՀ	դրամ		12000000	1
45231187	Նախահետազոտական ծախսեր	ԲԸԱՀ	քմ		1000000	1
	Ընդամենը				38607750	
Անվանումը՝ Աղբահանում						
Բաժին 05 խումբ 1 դաս 1 ծրագիր 51						
	Ծառայություն					
90500000	Աղբահանում	ԲԸԱՀ	դրամ		200000	1
	Ընդամենը				200000	

Բաժին 05 խումբ 6 դաս 1 ծրագիր 51						
	Ծառայություն					
99600000	Պարտադիր վճարներ	ԲԸԱՀ	դրամ		20000	
	Ընդամենը				20000	
Բաժին 06 խումբ 4 դաս 1 ծրագիր 51						
	Ծառայություն					
65300000	Էներգետիկ ծառայություն	ԲԸԱՀ	կվտ/ժ		300000	1
	Աշխատանք					
31521600	Փողոցների լուսավորություն	ՊԸ			24000000	
31521600	Փողոցների լուսավորություն	ԲԸԱՀ			1000000	
	Ընդամենը				1	
Բաժին 08 խումբ 2 դաս 4 ծրագիր 51						
	Ապրանքներ					
18530000	Լվերներ	ԲԸԱՀ	դրամ		150000	1
	Ծառայություն					
75110000	Ընդհանուր բնույթի այլ ծառայութ.	ԲԸԱՀ	դրամ		50000	1
	Ընդամենը				200000	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 փետրվարի 2017 թվականի N 10-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի N 23-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման հավելվածի 13-րդ կետը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի 2015 թվականի մայիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ գյուղական համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» N 23-Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի փետրվարի 1
գ.Գետամեջ

Հավելված
Կոտայքի մարզի Գետամեջ
համայնքի ղեկավարի 2017 թվականի
փետրվարի 1-ի N 10-Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները (այսուհետ՝ Հանձնաժողով) ստեղծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 631-Ն որոշմամբ նախատեսված աշխատանքների համակարգման նպատակով: Հանձնաժողովի աշխատակարգի նպատակն է առավել արդյունավետ դարձնել Հանձնաժողովի աշխատանքները և կանոնակարգել Հանձնաժողովի աշխատանքներին վերաբերող և Հանձնաժողովի կանոնադրությամբ չկարգավորված հարցերը:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

2. Հանձնաժողովի անհատական կազմից համայնքի ավագանու որոշմամբ սահմանվում են Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:

3. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ:

4. Հանձնաժողովի նիստում որոշվում է հաջորդ հերթական նիստի օրը: Անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ կարող է

գումարվել արտահերթ նիստ:

5. Հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը արտահերթ նիստ գումարելու առաջարկությամբ կարող են դիմել Հանձնաժողովի նախագահին:

6. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

7. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են քվեարկության միջոցով:

8. Հանձնաժողովի որոշմանը դեմ քվեարկած Հանձնաժողովի անդամների հատուկ կարծիքները կցվում են արձանագրությանը:

9. Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը կամ, նրա հանձնարարությամբ, հանձնաժողովի անդամներից որևէ մեկը:

10. Հանձնաժողովի անդամների առաջարկությամբ և նախագահի հրավերով Հանձնաժողովի նիստերին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի, համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնի, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի սոցիալական ծառայության տարածքային մարմինների, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի զբաղվածության տարածքային կենտրոնների, բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների, ուսումնական հաստատությունների, առողջապահական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային մարմնի, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների ներկայացուցիչները:

11. Հանձնաժողովի նիստերին դիտորդի կարգավիճակով կարող են մասնակցել երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ոլորտում գործունեություն իրականացնող հասարակականկազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները:

III. ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

12. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են Հանձնաժողովի նախագահի կողմից հաստատված օրակարգով:

13. Հանձնաժողովի նախագահը որոշում է Հանձնաժողովի նիստի անցկացման վայրը և ժամը:

14. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկելու համար կարող է նիստից առնվազն 15 օր առաջ հարց ներկայացնել Հանձնաժողովի նախագահին:

15. Հանձնաժողովի օրակարգում նշվում են՝

1) հանձնաժողովի նիստի անցկացման վայրը, օրը և ժամը,
2) քննարկման ենթակա հարցերը,
3) քննարկվող յուրաքանչյուր հարցը զեկուցողի անունը, ազգանունը:

16. Հանձնաժողովի նիստերի օրակարգը և քննարկվելիք հարցերին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը Հանձնաժողովի անդամներին են փոխանցվում նիստից առնվազն 7 աշխատանքային օր առաջ:

17. Հանձնաժողովի գործունեության կազմակերպչական-տեխնիկական աշխատանքներն ապահովում է Հանձնաժողովի քարտուղարը:

IV. ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

18. Հանձնաժողովի նիստերի արձանագրումն ապահովում է Հանձնաժողովի քարտուղարը:

19. Նիստի արձանագրության մեջ նշվում են՝

1) նիստի անցկացման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը և վայրը, նիստն սկսելու և ավարտելու ժամերը,
2) նիստի օրակարգը,
3) նիստին մասնակցող, հրավիրված անձանց, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների անունները,
4) քննարկվող հարցերի, զեկուցումների և ելույթների հիմնական դրույթները,

5) ընդունված որոշումները, դրանց տարածման և (կամ) հրապարակման ձևերը:

20. Հանձնաժողովի նիստի արձանագրությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում են Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:

21. Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները պահվում են համայնքապետարանի աշխատակազմում:

V. ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

22. Հանձնաժողովի նախագահը՝

1) նախագահում է Հանձնաժողովի նիստերը,
2) հաստատում է Հանձնաժողովի օրակարգը և ստորագրում Հանձնաժողովի ընդունած որոշումներն ու արձանագրությունները,
3) լսում է Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների կատարման ընթացքի մասին հաշվետվությունները և տալիս ցուցումներ ու հանձնարարականներ,
4) որոշում է Հանձնաժողովի նիստերին հրավիրվող անձանց կազմը,
5) իրականացնում է Աշխատակարգով սահմանված այլ լիազորություններ:

23. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է Հանձնաժողովի նիստերին,
2) ներկայացնում է հարցեր Հանձնաժողովի օրակարգում ընդգրկելու համար,
3) Հանձնաժողովի նիստերի ընթացքում քննարկվող հարցերի վերաբերյալ ներկայացնում է բանավոր կամ գրավոր կարծիք,
4) մասնակցում է որոշումների ընդունման համար քվեարկությանը,
5) ծանոթանում է Հանձնաժողովի նիստերի արձանագրություններին:

24. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ապահովում է Հանձնաժողովի աշխատանքների, նիստերի, օրակարգերի, անհրաժեշտ նյութերի, ինչպես նաև որոշումների նախագծերի նախապատրաստումը և դրանք տրամադրում Հանձնաժողովի անդամներին,
2) Հանձնաժողովի անդամներին իրազեկում է Հանձնաժողովի նիստերի

անցկացման օրվա, վայրի և ժամի մասին,

3) ստորագրում է Հանձնաժողովի որոշումներն ու արձանագրությունները,

4) կազմում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

25. Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի նիստի արձանագրությունը նիստից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է հանձնաժողովի բոլոր անդամներին, ինչպես նաև ներկայացնում համապատասխան մարզպետարան:

26. Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները տեղադրվում են համայնքի, ինչպես նաև համապատասխան մարզպետարանի ինտերնետային կայքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 փետրվարի 2017 թվականի N 11-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 84-րդ հոդվածի 2-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածի 4-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 11-ի N 14-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագծի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկում:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման հրավերը՝ համաձայն հավելվածի:

3. Հանրային քննարկման ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ՝ Ռուզաննա Մուրադի Սարգսյանին:

4. Գետամեջի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Կարեն Անդրանիկի Սարգսյանին՝

1) համայնքապետարանի պաշտոնական կայքում տեղադրել Գետամեջ համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման հրավերը, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:

2) համայնքապետարանի պաշտոնական կայքում հրապարակել Գետամեջ համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագիծը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի դեկտեմբերի 1
գ.Գետամեջ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Գետամեջ համայնքի ղեկավարի 2017 թվականի
փետրվարի 1-ի N 11-Ա որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀՐԱՎԵՐ

Համաձայն Գետամեջ համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 11-ի «Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» N 14-Ն որոշմամբ հաստատված հավելվածի, 2017 թվականի փետրվարի 17-ին ժամը՝ 13:20-ից մինչև 15:20-ն «Գետամեջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում կկայանան հանրային բաց լսումներ՝ Գետամեջ համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագծի վերաբերյալ: Հանրային լսումներին կարող են մասնակցել բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Հանրային լսումների ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձինք Գետամեջի համայնքապետարանի պաշտոնական կայքում (www.getamej.am) հրապարակված Գետամեջ համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց առաջարկություններն ու առարկությունները, որոնք կարող են ուղարկել getamejmc@mail.ru կամ getamej.kotayq@mta.gov.am էլեկտրոնային հասցեներով, ինչպես նաև կարող են գրավոր ներկայացնել աշխատակազմին:

Աշխատակազմը ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հետադարձ կապի միջոցով տեղեկացնում է համապատասխան առաջարկությունները և առարկությունները ստանալու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 փետրվարի 2017 թվականի N 12-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆՈՐՄԱՏԻՎ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 5-րդ մասերով և 63-րդ հոդվածի 1-ին մասով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 19-ի N 53-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 3-Ն որոշումը պաշտոնական հրապարակել 2017 թվականի փետրվարի 17-ին:
2. Պաշտոնական հրապարակումն իրականացնել համայնքի տարբեր հատվածներում ցուցատախտակներին փակցնելու և համայնքապետարանի պաշտոնական կայքում (www.getamej.am) տեղադրելու միջոցով:
3. Պաշտոնական հրապարակման պատասխանատվությունը դնել աշխատակազմի քարտուղարի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի փետրվարի 15
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 փետրվարի 2017 թվականի N 13-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի N 9-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 896-Ն հրամանի 2-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի 2017 թվականի հունվարի 25-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջի համայնքապետարանի կարիքների համար 2017 թվականին կատարվող գնումների պլանը հաստատելու մասին» N 9-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի փետրվարի 15
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 մարտի 2017 թվականի N 14-Ա

ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Սամվել, Լիլիթ Ղուկասյաններին և Անահիտ Մինասյանին պատկանող բնակելի կառուցապատման հողամասին /կադաստրային ծածկագիր՝ 07-025-0015-0049/ տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 3-րդ փողոց N 24/1 հողամաս:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում՝ հասցեի պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի մարտի 2
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մարտի 2017 թվականի N 15-Ա

ՄԻՆՉԵՎ 20 ՏՈԿՈՍ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. Անհատույց թողնել և ճանաչել Գետամեջ համայնքի բնակիչներ՝ Սամվել Լիտվինոսի Ղուկասյանի, Անահիտ Ջամիլի Մինասյանի և Լիլիթ Սամվելի Ղուկասյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը՝ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 1992 թվականի ապրիլի 20-ի N03 որոշմամբ սեփականաշնորհված 0,2 հեկտար բնակելի կառուցապատման հողամասից (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0015-0049) մինչև 20 տոկոս ավել օգտագործվող 328 քառակուսի մետր բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի մարտի 06
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մարտի 2017 թվականի N 16-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ, ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2017 թվականի փետրվարի 27-ի N 31-Ա որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի տարածքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարաթափումների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Մինչև 2017 թվականի մարտի 18-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչություն ներկայացնել.

1) համապատասխան միջոցառումների պլան,

2) տեղեկություններ համայնքի հակահեղեղային կառույցների հաշվառման վերաբերյալ՝ համաձայն N 2 հավելվածի,

3) առաջարկություններ՝ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Սույն որոշման կատարման հսկողությանը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Մերուժան Պապոյանի վրա:

4. Սույն որոշման ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի 2017 թվականի մարտի 6-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի տարածքում 2016 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարաթափումների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների մասին» N 13-Ա որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի մարտի [illegible]
գ.Գետամեջ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ
համայնքի ղեկավարի 2017 թվականի մարտի 6-ի N 16-Ա որոշման

ՊԼԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՎՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ, ՔԱՐԱՆԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Հ/Հ	Միջոցառումների անվանումը	Կատարող	Կատարման ժամկետը
1	2	3	4
	1. Կանխարգելիչ միջոցառումներ		
1.	Ուսումնասիրել և գնահատել գետերի հուների, քարաթափման տեղամասերի վիճակը և արդյունքները ներկայացնել Կոտայքի մարզային փրկարարական վարչություն:	Համայնքի ղեկավարի տեղակալ	Մինչև 2017 թվականի մարտի 18-ը
2.	Նախապատրաստել համապատասխան տեխնիկա և շինարարական նյութեր՝ գետերի հուների և քարաթափման տեղամասերի անհրաժեշտ հատվածները մաքրելու, վտանգավոր տեղամասերում ափապաշտպան կառույցները ամրացնելու համար:		Մինչև 2017 թվականի մարտի 18-ը
3.	Մաքրել համայնքի տարածքով հոսող գետերի հուները: Վտանգավոր տեղամասերում ամրացնել ափապաշտպան կառույցները:		Մշտական
4.	Բնակչության հետ կատարել բացատրական աշխատանքներ՝ ջրածածկման, հեղեղավտանգ, սելավավտանգ և սողանքավտանգ գոտիներում դաշտային աշխատանքներ կատարելու համար:		
5.	Պատշաճ վիճակի բերել համայնքային կազմակերպությունները և արագ արձագանքման փրկարար խմբերը, դրանք հագեցնել համապատասխան անձնակազմով, տեխնիկայով և սարքավորումներով:	Կազմակերպությունների, փրկարարական ջոկատի հրամանատարներ, համայնքի ղեկավարի տեղակալ	Մինչև 2017 թվականի մարտի 18-ը
	2. Հիմնական միջոցառումներ		
6.	Իրազեկել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը՝ իրենց սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին:	Համայնքի ղեկավարի տեղակալ	Մշտական
7.	Հնարավոր վտանգավոր վայրերում կազմակերպել հսկողություն՝ արագ արձագանքելու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար:	Համայնքի ղեկավարի տեղակալ	Անհրաժեշտության դեպքում
8.	Անհրաժեշտության դեպքում կազմակերպել և իրականացնել վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումը և տեղաբաշխումը:	Տարահանման հանձնաժողովի նախագահ, համայնքի ղեկավարի տեղակալ	Անհրաժեշտության դեպքում
9.	Տուժած շրջաններում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ:	Համայնքի ղեկավարի տեղակալ	Ըստ անհրաժեշտության
10.	Ներգրավել աշխատունակ բաղաքացիներին (իրենց համաձայնությամբ), ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների պատճառած հետևանքների վերացման գործընթացին՝ ըստ մասնագիտական և անձնական հնարավորությունների:	Համայնքի ղեկավարի տեղակալ	Անհրաժեշտության դեպքում

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ
համայնքի ղեկավարի 2017 թվականի մարտի 6-ի N 16-Ա որոշման

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻԿԱՀԵՂԵՂԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

ՀՀ	Կառույցի տեղադրությունը (բնակավայր, գետ, ավազան, վտակ)	Կառույցի տիպը (հեղեղատար, հեղեղակարգավորիչ, բառաժ)	Կառույցի				Կառույցի տեղանքի սեյսմիկության աստիճանը (բալ)	Մոտակա բնակավայրերի և կառուցվածքների անվանումը, որոնք կարող են տուժել կառույցի անբավարար աշխատանքի հետևանքով	Կառույցի տեխնիկական վիճակը (բավարար, անբավարար)
			երկարությունը (մ)	լայնությունը (մ)	խորությունը (մ)	Կողեզրերի թեքությունը (°)			
1	2	3	4	5	6	7	8	9	10
1.	6-րդ փողոցի հարևանությամբ	բնական	600	3	2	45		գ. Գետամեջ	բավարար

Կ.Տ.

ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ
համայնքի ղեկավարի 2017 թվականի մարտի 6-ի N 16-Ա որոշման

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊՍՈՒԱՑՈՂ ՊՈՏԵՆՑԻԱԼ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/Հ	Վտանգի (աղետի) անվանումը (ները)	Վտանգավոր տեղամասի գտնվելու վայրը (երը)	Առաջացման հնարավոր պատճառները	Վտանգավոր գոտում գտնվող շենքերի, շինությունների և բնակչության թիվը	Կանխարգելիչ միջոցառումների առաջարկությունները իրականացնելու համար	Համայնքների բյուջեներում կամ այլ ծրագրերով 2017 թվականին պլանավորված, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելիք միջոցառումների համար ծախսերի չափն ըստ միջոցառումների տեսակների
1.	սելավ	1-ին, 4-րդ և 3-րդ փողոցների տարածք	հորդառատ անձրևներ, ձնհալ	32 տուն, 143 մարդ	սելավատարների կառուցում	համայնքի 2017 թվականի բյուջեով քաղ. պաշտպանության և փրկարար ծառայության բնագավառներում 20 000 դրամ
2.	հեղեղում	Հրազդան գետի ափամերձ տարածք	հորդառատ անձրևներ, ձնհալ, ջերմաստիճանի կտրուկ բարձրացում	8 տուն, 21 մարդ	գետի հունի մաքրում	
3.	սողանք	ամառանոցային (այգեգործական) տարածք	հորդառատ անձրևներ, ձնհալ	31 այգետնակ		
4.	քարաթափում	2-րդ փողոցի 5-րդ փակուղու տարածք	երկրաշարժ	6 տուն, 30 մարդ	պատնեշի կառուցում	

ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 մարտի 2017 թվականի N 17-Ա

ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Մեր Մուրադյանին պատկանող բնակելի կառուցապատման հողամասին և շինությանը /կադաստրային ծածկագիր՝ 07-025-0011-0004/ տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 3-րդ փողոց 1-ին փակուղի N 5:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում՝ հասցեի պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

2017 թվականի մարտի 7
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մարտի 2017 թվականի N 18-Ա

ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Լիլյա Հովսեփյանին և Գագիկ Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողամասին և շինությանը /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 1076584, կադաստրային ծածկագիր՝ 07-025-010-020/ տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 4-րդ փողոց տուն N 1:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում՝ հասցեի պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի մարտի 13
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 2017 թվականի N 19-Ա

ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ կետի բ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Նախկին Պտղնի-1 թաղամաս թիվ 179 այգետնակ հասցեում գտնվող Մարինե Հակոբջանյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողամասը և շինությունը /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 0103165, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0215-0011/ վերահասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 4-րդ փողոց, 5-րդ փակուղի N 9 այգետնակ:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում՝ հասցեի պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի մարտի 14
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 2017 թվականի N 20-Ա

ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. 2017 թվականի մարտի 15-ին ժամը 14:00-ին հրավիրել Գետամեջ համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգով.

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 27-ի N 8-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի մարտի 14
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մարտի 2017 թվականի N 21-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 19-ի N 53-Ն որոշման 2-րդ կետը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 2017 թվականի բյուջեում կատարել վերաբաշխում՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ Ռ. Սարգսյանին կատարել նախահաշվի համապատասխան փոփոխություններ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

2017 թվականի մարտի 20
գ.Գետամեջ

Հավելված
Հայաստանի Հանրապետության կոտայքի մարզի
Եղեգնաձորի համայնքի ղեկավարի 2017 թվականի
մարտի 20-ի N 21-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ

(հազար դրամ)

Հ/Հ	Բյուջետային ծախսը			Հոդված	հաստատված գումարը	ավելացում /+/ պակասեցում /-/	գումարը վերաբաշխումից հետո
	Գործառնական դասակարգում	ծրագիր	Տնտեսագիտական դասակարգում				
	անվանումը		անվանումը				
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	01.1.1	Շենքերի և շինությունների կառուցում	5112	800.0	-400.0	400.0
2	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	01.1.1	Վարչական սարքավորումներ	5122	500.0	400.0	900.0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 մարտի 2017 թվականի N 22-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆՈՐՄԱՏԻՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 5-րդ մասերով և 63-րդ հոդվածի 1-ին մասով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» N 8-Ն, «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 11-ի N 13-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 10-Ն, «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 11-ի N 14-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 11-Ն և «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 11-ի N 15-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 12-Ն որոշումները պաշտոնական հրապարակել 2017 թվականի մարտի 23-ին:
2. Պաշտոնական հրապարակումն իրականացնել համայնքի տարբեր հատվածներում ցուցատախտակներին փակցնելու և համայնքապետարանի պաշտոնական կայքում (www.getamej.am) տեղադրելու միջոցով:
3. Պաշտոնական հրապարակման պատասխանատվությունը դնել աշխատակազմի քարտուղարի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի մարտի 22
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մարտի 2017 թվականի N 23-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N843-Ն որոշումով՝ ***որոշում եմ.***

1. Տալ թույլտվություն անհատ ձեռնարկատեր Սիմոն Հայրապետյանին Գետամեջ համայնքի 2-րդ փողոցի N 14 հասցեում գործող հանրային սննդի օբյեկտում 2017 թվականի ապրիլի 1-ից մինչև 2017 թվականի հուլիսի 1-ն իրականացնելու.

1) ոգելից խմիչքների արտադրանքի իրացում.

2) ծխախոտի արտադրանքի իրացում,

3) հանրային սննդի կազմակերպում և իրացում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի մարտի 31
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մարտի 2017 թվականի N 24-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N843-Ն որոշումով՝ ***որոշում եմ.***

1. Տալ թույլտվություն անհատ ձեռնարկատեր Արմինե Պետրոսյանին Գետամեջ համայնքի 3-րդ փողոցի թիվ 7 հասցեում գործող մանրածախ առևտրի խանութում 2017 թվականի ապրիլի 1-ից մինչև 2017 թվականի հուլիսի 1-ն իրականացնելու.

1) ոգելից խմիչքների արտադրանքի մանրածախ վաճառք.

2) ծխախոտի արտադրանքի մանրածախ վաճառք:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի մարտի 31
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ապրիլի 2017 թվականի N 25-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից ներկայացված դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը Մ-4 Պտղնի-Գետամեջ ճանապարհի անցանելիության ապահովման շինարարական աշխատանքների կատարման համար տալ շինարարության թույլտվություն:
2. Կառուցապատողը շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Գետամեջ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի ապրիլի 4
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ապրիլի 2017 թվականի N 26-Ա

ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ կետի բ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Գ. Գետամեջ 10-րդ փողոց թիվ 143 այգետնակ հասցեում գտնվող Մեյրան, Քնարիկ և Արմենուհի Արևշատյաններին սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողամասը և շինությունը /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 2809982, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0216-0046/ վերահասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 10-րդ փողոց N 32 այգետնակ:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում՝ հասցեի պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի ապրիլի 7
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ապրիլի 2017 թվականի N 27-Ա

ՀՈՂԱՄԱՍԸ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ և 48-րդ կետերի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Դմիտրի Ղամբարյանին սեփականության իրավունքով պատկանող 0,24 հեկտար բնակելի կառուցապատման հողամասը և շինությունը /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 1797486, կադաստրային ծածկագիր՝ 07-025-014-081/ բաժանել 0,1557 հեկտար և 0,08361 հեկտար երկու առանձին գույքային միավորների:
2. 0,1557 հեկտար մակերեսով առանձնացված գույքային միավորին տրամադրել համայնք Գետամեջ 4-րդ փողոց, N 14 հասցեն:
3. 0,08361 հեկտար մակերեսով առանձնացված գույքային միավորին տրամադրել համայնք Գետամեջ 4-րդ փողոց, N 20/1 հասցեն:
4. Վճարել Գետամեջի գյուղապետարանի 900115112063 հաշվեհամարին՝ 3000 (երեք հազար) դրամ՝ նոր առաջացած հասցեի տրամադրման ծառայության վճար:
5. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանում՝ հասցեի պետական գրանցում ստանալու համար:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

2017 թվականի ապրիլի 20
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ապրիլի 2017 թվականի N 28-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ, ԱՂԲԱՀԵՌԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջներով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2017 թվականի ապրիլի 21-ի N 01/15.1/1682-17 գրության՝ ***որոշում եմ.***

1. 2017 թվականի ապրիլի 29-ին համայնքի տարածքում անցկացնել սանիտարական մաքրման, աղբահեռացման և բարեկարգման միջոցառումներ՝ մասնավորապես.

1) աղբահավաքություն և սանիտարական մաքրում,

2) ճանապարհների և ճանապարհամերձ հատվածներում աղբի կուտակումների մաքրում,

3) եղած աղբակույտերի և ցրված աղբի հավաքում և տեղափոխում:

2. Սանիտարական մաքրման միջոցառումներ անցկացնելու աշխատանքները համակարգելու և վերահսկելու նպատակով ստեղծել համայնքային հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Մ. Պապոյան — հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի տեղակալ,

2) Ս. Մինասյան — հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ,

3) Ս. Ղազարյան հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու անդամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի մարտի 21
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ապրիլի 2017 թվականի N 29-Ա

ՀՈՂԱՄԱՍԸ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ և 48-րդ կետերի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Թռչնաֆաբրիկա «Գետամեջ 2016» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 24,348 հեկտար արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 04112016-07-0012, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0206-0004/ բաժանել 23,15120 հեկտար և 1,19680 հեկտար երկու առանձին գույքային միավորների:
2. 23,15120 հեկտար մակերեսով առանձնացված գույքային միավորին տրամադրել համայնք Գետամեջ 2-րդ փողոց, N 15 հասցեն:
3. 1,19680 հեկտար մակերեսով առանձնացված գույքային միավորին տրամադրել համայնք Գետամեջ 2-րդ փողոց, N 15/2 հասցեն:
4. Վճարել Գետամեջի գյուղապետարանի 900115112063 հաշվեհամարին՝ 3000 (երեք հազար) դրամ՝ նոր առաջացած հասցեի տրամադրման ծառայության վճար:
5. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանում՝ հասցեի պետական գրանցում ստանալու համար:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

2017 թվականի ապրիլի 25
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2017 թվականի N 30-Ա

ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ կետի բ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Նախկին Գետամեջ (Պտղնի) 10-րդ փողոց թիվ 137 այգետնակ հասցեում գտնվող Աշոտ Լևոնի Շահմուրադյանին պատկանող բնակելի կառուցապատման հողամասը և շինությունը /հիմք՝ անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր, տրված՝ 2017 թվականի ապրիլի 14-ին, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0014-0052-ից/ վերահասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 4-րդ փողոց N 41/1 այգետնակ:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում՝ հասցեի պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի ապրիլի 28
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ. getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 մայիսի 2017 թվականի N 31-Ա

ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Աշոտ Աշոտի Ոսկանյանին պատկանող բնակելի կառուցապատման հողամասին և շինությանը /հիմք՝ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, տրված՝ 2017 թվականի մայիսի 5-ին, կադաստրային ծածկագիր՝ 07-025-007-007/ տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 1-ին փողոց տուն N 25:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում՝ հասցեի պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի մայիսի 5
գ.Գետամեջ